



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից	Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից	Իրականացնող՝ Իրավաբանների իրավաբանների ասոցիացիա	Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն	Իրականացնող՝ «Արարատի մարզի կանաչներ» ՀԿ	Գործընկեր՝ «Արարատ քաղաքի կանանց խորհուրդ» ՀԿ
---	---	--	--	--	---

«ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՉՆԵՐ» ՀԿ

«Հանրային վերահսկողության մեխանիզմների հզորացում Արարատի մարզում»

ԾՐԱԳՐԻ ԶԵԿՈՒՅՑ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

«Հանրային վերահսկողության մեխանիզմների հզորացում Արարատի մարզում» ծրագիրը իրականացրել է «Արարատի մարզի կանաչներ» հասարակական կազմակերպությունը՝ գործընկեր «Արարատ քաղաքի կանանց խորհուրդ» հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 750000 ՀՀ դրամ, որից 660 000 ՀՀ դրամը տրամադրվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի սկսողությունն է՝ 2016թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2016թ. նոյեմբերի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ-ի կողմից:

ք.Արտաշատ

2016թ.

**«Հանրային վերահսկողության մեխանիզմների հզորացում Արարատի մարզում»
Ծրագրի զեկույց**

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Արարատի մարզի կանաչներ» հասարակական կազմակերպության և գործընկեր «Արարատ քաղաքի կանանց խորհուրդ» հասարակական կազմակերպության հետ համատեղ կողմից իրականացվել է «Հանրային վերահսկողության մեխանիզմների հզորացում Արարատի մարզում» ծրագիրը, որի նպատակն էր հանրային իրազեկման և վերահսկողության միջոցով նպաստել Արարատի մարզի ծննդատներում կոռուպցիոն ռիսկերի և չարաշահումների նվազեցմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է մոնիթորինգ, որի արդյունքներն ամփոփված են սույն զեկույցում:

Նպատակը և մեթոդաբանությունը

Սույն հետազոտության նպատակն է գնահատել կոռուպցիայի մակարդակը Արարատի մարզի ծննդատներում՝ հանրային իրազեկման և վերահսկողության միջոցով նպաստել ծննդատներում կոռուպցիոն ռիսկերի և չարաշահումների նվազեցմանը:

Այդ խնդիրները լուծելու համար անհրաժեշտություն է առաջացել խթանել քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը հանրային վերահսկողություն իրականացնելու գործընթացներում:

Հետազոտության համար ընտրվել և կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

- Խորհրդատվության տրամադրում և տեղեկության հավաքագրում կազմակերպության գրասենյակում:
- Տեղեկության հավաքագրում՝ հիվանդներին այցելությունների և նրանց հետ հարցազրույցների անցկացման միջոցով:
- Ստացված տեղեկությունների որակական գնահատում և վերլուծություն:

Մոնիթորինգի արդյունքները.

Հարցվածների ընդհանուր թիվն է՝ 100 քաղաքացի, որից 65-ը կին, բարձրագույն կրթություն ունեն 24-ը:


Քաղաքացիներից 48 -ը աշխատանք ունեն, 20-ը մասնավոր աշխատանքներ են անում, մնացածը չեն աշխատում, գործազուրկ են:

Խորհրդատվության տրամադրում և տեղեկության հավաքագրում կազմակերպության գրասենյակում

Տեղական հեռուստատեսությամբ և ռադիոյով պարբերաբար տրվել են հայտարարություններ այն մասին, որ ծննդատների հետ պետպատվերի շրջանակների խնդիրներ ունեցող քաղաքացիները կարող են դիմել կազմակերպության հաշվեհամարով, կամ դիմեն կազմակերպությանը թե՛ զծի համարով՝ 0235.2.34.65: Դիմողները ստացել են անհրաժեշտ խորհրդատվություն, սիրով մասնակցել են հարցազրույցին, տրամադրել են անհրաժեշտ տեղեկությունները:

Հարցումն իրականացվել է դիմած համայնքների փորձաքննություն անցնող անձանց հետ՝ իրենց բնակարաններում՝ Արտաշատի, Մասիսի ծննդատներում, Այնթապ, Նոր Խարբերդ, ք. Մասիս, ք. Արտաշատ համայնքների ազգաբնակչության շրջանում՝ 2016թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին:

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են է 100 քաղաքացի, տարիքային հետևյալ համամասնությամբ.



Տեղեկության հավաքագրում՝ այցելությունների և հարցազրույցների միջոցով:

Հարցումն իրականացվել է խնդիրները լուծելու համար: Անհրաժեշտություն է առաջացել խթանել քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը հանրային վերահսկողություն իրականացնելու գործընթացներում: Մոնիթորինգի անցկացման համար հարցաթերթեր է կազմվել:

Այդ նպատակով գյուղական համայնքների 4 երիտասարդների ներգրավել ենք հանրային դիտորդման, ինչպես նաև 50 ծննդաբերածների՝ մոնիթորինգի և հանրային վերահսկողության գործընթացներում:

Այն հարցին «Արդյոք գիտեք անվճար ծննդօգնություն ովքեր և ինչ պարագայում կարող են ստանալ», 50 ծննդաբերողների՝ մոնիթորինգի և հանրային վերահսկողության շրջանակներում պարզվեց 34-ն արդեն իրազեկված էր, 16 հոգու հետ դիտորդները

բացատրական աշխատանքներ տարան, թե պետական պատվերի շրջանակներում ովքեր պետք է գումարներ վճարեին: Հիվանդանոցներում գտնվողները հիմնականում պնդում էին, որ բժիշկները իրենցից գումար չեն պահանջել:

Հարցումների, դիտարկումների արդյունքում մեկ հղի չէր տիրապետում անվճար ծննդոգնության վերաբերյալ տեղեկատվությանը:

Վայոց Ձորի մարզի երկու հղիներ իրենց ցանկությամբ որոժել էին ծննդալուծումը կազմակերպել Արարատի մարզում, սակայն մինչև առաջին այցելությունը չգիտեին, որ ծննդալուծումն իրենց համար վճարովի է, որը դիտորդների կողմից բացատրվեց, հղումներ անելով ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանները /22.01.2013 թ թիվ 89-Ա հրամանի 2-րդ և 3-րդ կետերը/:

Դիտարկման ընթացքում հանդիպեցինք մեկ դեպքի, երբ էլնելով հղիի ծանրության վիճակից ուղեգրեցին Երևանի բարձրակարգ հիվանդանոց: Ինչպես դիտորդների, այնպես էլ բուժանձնակազմի կողմից նրանց բացատրվեց, որ իրենց ծննդալուծումը նույնպես անվճար է:

- 2 առողջապահական հաստատություններում ծննդոգնություն ստացող մոտ 50 կանանց շրջանում տարածել ենք մոնիթորինգի անցկացման համար հարցաթերթերը, տեղեկատվական թերթիկներ և իրականացրել իրազեկման աշխատանքներ:
- Հաշվետվություն ենք տարածել սոցիալական ցանցի, ԶԼՄ-ների և պաշտոնական կայքերի միջոցով:
- Դիտորդների միջոցով դրամարկում դիտարկվել է վճարովի ծառայությունների ցանկի առկայությունը: Պարզվել է, որ առկա էր հիվանդանոցներում, իսկ պոլիկլինիկաների բաժանմունքներում կազմակերպության կողմից մշակվեց և տեսանելի վայրերում փակցրվեց:
- Անվճար ծննդոգնության վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրվել հղի կանանց, ծննդաբերածներին:
- Տպագրվել և հայտարարություններ է տեղադրվել ք. Արտաշատի և ք. Մասիսի բնակչությանը մատչելի վայրերում՝ անվճար ծառայությունների վերաբերյալ:

Եզրակացություն

Այսպիսով՝ ծննդօգնության պետպատվերի շրջանակներում իրականացման գործընթացը հանրային ծառայությունների այն ոլորտներից է, ուր կոռուպցիոն երևույթները հնարավոր են, ինչը բազմիցս արծարծվել է թե՛ կառավարական մակարդակում, և թե՛ շահառուների ու ՀԿ-ների շրջանում: Պատասխանատվության առումով առկա է պատկան մարմինների որոշակի անգործություն:

Առաջարկություններ

1. Հասարակական կազմակերպությունների միջոցով պարբերաբար Արարատի մարզի հիվանդանոցների ծննդաբերական բաժանմունքների և ծննդատան կողմից տրամադրված ծառայությունների դիտարկման միջոցով վեր հանել կոռուպցիոն ռիսկերը և ներկայացվել հանրային քննարկման:

2. Բարձրացնել թափանցիկության մակարդակը, հանրային իրազեկման մակարդակը՝ պետության կողմից երաշխավորվող անվճար ծննդօգնության, ինչպես նաև մորը և մանկանն ուղիված առողջապահական ծրագրերի վերաբերյալ:

3. Ստեղծել հանրային վերահսկողության և բողոքարկման գործուն մեխանիզմներ: Ճիշտ է ՀՀ կառավարության որոշմամբ կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են դիտորդի կարգավիճակով մասնակցել հիվանդանոցների կողմից տրամադրվող ծառայությունների սամանված կարգով իրականացման գործընթացներին սակայն այդ կարգավիճակը բավարար չէ գործընթացների վրա լիարժեք ազդելու: Այդ պատճառով էլ շատ հասարակական կազմակերպություններ պարզապես չեն ցանկանում մասնակցել փորձաքննություններին:

4. Կիրառել պատասխանատվության մեխանիզմներ:

«Արարատի մարզի կանաչներ» ՀԿ նախագահ,

Ծրագրի ղեկավար՝

Հասմիկ Խաչատրյան

«02» դեկտեմբեր, 2016թ.